

(2018): Յետմահու լոյս տեսաւ անոր վաստակը ամփոփող *Անկրկնելի Ժիրայր Դանիէլեան* հատորը (2023):

Իր խմբագրութեամբ վերահրատարակուեցան Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ հայկական բնօրաններու շարք մը յուշամատեններ, մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ:

Դանիէլեան եզակի հետազօտող մըն էր, բանասիրական բնագաւառին մէջ անխոնջ պեղումներով նորութիւններ յայտնաբերող, սխալներ մատնանշող:

2011ին, իր ծննդեան 70 եւ գրական գործունէութեան 50ամեակներուն առիթով Դանիէլեան պարգեւատրուեցաւ զանազան շքանշաններով, ոսկեմետալներով, պատուոգրերով, ստացաւ նաեւ մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին շնորհատրական կոնդակը եւ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանը: Ան ստացած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» եւ Հայաստանի Գրողներու միութեան շքանշանները:

4 Օգոստոս 2020ին Պէյրութի նաւահանգիստին պատահած ահաւոր պայթումին պատճառով իր աչքերէն վիրատրուեցաւ, աչքերէն մին գրեթէ կորսնցուց, իսկ միւրը՝ ծանրօրէն վնասուեցաւ:

Ժիրայր Դանիէլեան մահացաւ 24 Նոյեմբեր 2022ին, Մ. Նահանգներ:

ՎԱՐԴԱՆ ԴԵՐԻԻԿԵԱՆ (1964–2023)



ՀՀ բանակի հարիւրապետ (1994), բանասիրական գիտութիւններու դոկտոր (2014), լրագրող, գրականագէտ Վարդան Գէորգի Դերիկեանը ծնած է 18 Մայիս 1964ին, Կիրովական (ներկայիս Վանաձոր):

1986ին աւարտած է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը: 1988-94՝ պարբերաբար եղած է *Հայ զինուոր* եւ *Երկիր* թերթերու Արցախի յատուկ թղթակից, Փետրուար-Յուլիս 1994ին՝ Մարտակերտի ռազմաճակատի 5րդ մոտոհրաձգային կամաւորական ջոկատի օպերատիւ բաժնի աւագ սպայ: 1989-93՝ «Գթութիւն» բարեգործական կազմակերպութեան *Հուսատրիչ* թերթի խմբագրի տեղակալ, խմբագիր՝ 1990էն, միաժամանակ՝ Մատենադարանի գիտաշխատող, 1993էն՝ նաեւ *Էջմիածին* ամսագրի խմբագրի տեղակալ, 2000էն՝ գլխավոր խմբագիր: 2015-23՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի տնօրէն:

Պարգեւատրուած է Հայաստանի Հանրապետութեան «Մարտական խաչ» 2րդ աստիճանի շքանշանով:

Մասնակցած է Հայկազեան համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի կազմակերպած Իրաքի եւ Եգիպտոս-Սուտան-Ե-

թովպիոյ հայօճախներուն (2017 եւ 2018) նուիրում գիտաժողովներուն, ներկայացնելով մանրամասնեալ եւ համապարփակ պատմութիւնը այդ հայօճախներու եկեղեցական թեմերուն:


Բեղուն եւ նուիրեալ գրիչ, գիտական խորունկ մտքի եւ լայն տեսադաշտի տէր Դերիկեան կը յատկանշուէր ազնուութեամբ, համեստութեամբ եւ շինիչ գործնականութեամբ: Դժբախտաբար, ան կեանքէն հեռացաւ իր գիտական բերքի հազիւ առաջին մեծ շրջանը բոլորած: Հրատարակած է *Երուսաղէմի հայ ուխտաւորը* (1999), *Պայծառակերպութիւնը եւ Վարդավառի տօնը* (2006), *Հայ գիրքը, մասն Ա.* (2012), *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում* (2012), *Վասպուրականի արծիւը հայ գրականութեան անդամաւորում* (2021) աշխատութիւնները:

Դոկտոր Վարդան Դերիկեան մահացաւ 13 Ապրիլ 2023ին, Երեւան:

ՀՀՀ

ՍՈՒՐԷՆ ՅԱՍՄԻԿԵԱՆ

(1935–2022)



Շարժանկարի պատմաբան, քննադատ, տեսաբան, բեմագրող, արուեստագիտութեան թեկնածու, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ (1987), ուսուցչապետ (1996) Սուրէն Գուրգէնի Յասմիկեանը (Յակոբեան) ծնուել է 1935 Մարտի 19ին, Երեւանում: Հայ թատրոնի եւ շարժանկարի ականաւոր դերասանուհի, առաջին ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի Յասմիկի (Թագուհի Յակոբեան, 1879-47) թոռն է:

Սուրէն Յասմիկեանը մի առիթով գրել է, որ հայ շարժանկարն իր համար թերեւս սկսուել է 1943ի այն օրը, երբ յայտնուել է Երեւանի գլխաւոր հրապարակում եւ տեսել «Դաւիթ-Քէկ» շարժանկարի համար կառուցուած բեմագարդերը: Սակայն շարժանկարին նուիրուելը հաւանաբար նախա-սահմանուեց դեռ նրա ծննդեան տարում, երբ Ստեփան Կէորկովի նկարա-հանող խումբը վաւերագրել է սիրուած դերասանուհուն՝ վերջինիս բեմա-կան գործունէութեան երեսնամեակին նուիրուած վաւերագրութեան մէջ, որտեղ Յասմիկը խաղացնում է մի քանի ամսական Սուրիկին եւ ապա յանձնելով մօրը՝ գնում թատրոն...: Դեռ մանկուց որոշել է արուեստով զբաղուելու դէպքում, ի պատիւ մեծ մօր, ընտրելու է «Յասմիկեան» կեղ-ծանունը, որը յետագայում դարձել է նրա «պաշտօնական» ազգանունը:

1957ին աւարտել է ԵՊՀ բանասիրական բաժանմունքի ռուս գրականութեան բաժինը: Նոյն թուականին Երեւանում լոյս է տեսել նրա կազմած *К показу спектаклей Даргинской драматической студии* (Դարգինեան